Անկետավորման ժամանակ կարևոր են հարցաշարի մշակումը և ստացված պատասխանների վերլուծությունը: Մեթոդի արդյունավետությունը կախված է հարցերի բովանդակությունից և ընդգրկման աստիճանից. հարցերը պետք է լինեն պարզ, որոշակի, հստակ, հետաքրքիր, գրավիչ, ոչ երկընտրանքային, հարցվողի մեջ պատասխանելու ցանկություն առաջացնեն:

**Կիսափակ** հարցերով անկետայում, ի տարբերություն փակ հարցերով անկետայի, բացի առաջարկված պատասխանների տարբերակներից, կա ևս լրացուցիչ տող, որտեղ հարցվողը կարող է արտահայտել իր անձնական կարծիքը: Դա կիրառվում է այն դեպքերում, երբ հետազոտողը վստահ չէ, որ հարցվողին բավարարում են հնարավոր այլընտրանքային պատասխանները:

Էական նշանակություն ունի անկետայի նախնական փորձաքննությունը: Պատասխանների արտաքին հատկանիշները՝ այլընտրանքային բնույթը, «չգիտեմ», «դժվարանում եմ պատասխանել» և նմանատիպ հակիրճ պատասխանների մեծ թիվը վկայում են, որ հարցերը հստակ ձևակերպված չեն, հարցվածները լիովին չեն գիտակցում հարցերի նշանակությունը և հետազոտողի համար ճիշտ պատասխանի կարևորությունը:

Անկետավորման առավելությունը նրա մատչելիությունն է, սակայն առկա է նաև սուբյեկտիվ վերաբերմունքը: Հետազոտողն անկետավորումը կիրառում է այն ժամանակ, երբ անհրաժեշտություն կա բացահայտել իրեն անծանոթ մեծաքանակ մարդկանց կարծիքը: Անկետավորման ճիշտ կիրառման դեպքում կարելի է ստանալ օբյեկտիվ և արժանահավատ տեղեկատվություն:[17][18].

### **Հետազոտությունների արդյունքները և դրանց քննարկումը**

Հետազոտությունները իրականացվել են

*50-երեխաներ՝ մինչև 18 տարեկան անկեդային քարտերով:*

*150 հոգի- 20 տարեկանից բարձր մինչև 70 տարեկան անձանց անկեդային քարտերով:*

Ըստ մեր հետազոտության տվյալների մինչև 18 տարեկան երեխաները ունեցել են հիմնականում Տիպ 1 Շաքարային դիաբետ և բուժումն իրականացվել է Ինսուլինով՝ պարտադիր սննդակարգի պահպանումով:

Կախված երեխայի մոտ առկա ՇԴ-ի ցուցանիշից հիմնականում նշանակել են՝

- Կարճատև ազդեցությամբ-մարդկային ինսուլիններ (ազդում են 15-30

րույթ անց, տևողությունը՝ 5-8 ժամ)- Ակտրապիդ, Իլետին-ռեգուլյար, Հումուլին-ռեգուլյար:

- Ազդման միջին տևողությամբ ինսուլիններ- մարդկային ինսուլիններ /ազդում են 1.5-3 ժամ անց, տևողությունը 12-16 ժամ/ - Մոնոտարդ, Ինսուլատարդ, Հումուլին-NPH:
- Ազդման միջին տևողությամբ և երկարատև ազդեցությամբ ինսուլիններ ինսուլինի անալոգներ /ազդում են 2-2,5 ժամ անց, տևողությունը՝ 17-24 ժամ/ Գլարգին, Դետեմիր

### Ինսուլինի կողմնակի ազդեցությունները՝

Դրական գնահատելով ինսուլինի առավելությունները, պետք է նշել, որ այն ունի մի շարք կողմնակի ազդեցություններ, որոնցից են.

1. Ալերգիկ ռեակցիաները


2. Ինսուլինային այտուցները: Այտուցները սովորաբար անցնում են ինքնաբերաբար և հատուկ բուժում չեն պահանջում:

3. Հիպոգլիկեմիկ վիճակներ: Ինսուլինի չափաքանակի ոչ ճիշտ հաշվարկման /գերդոզավորման/, ածխաջրերի անբավարար քանակի ընդունման դեպքում անմիջապես ներարկումից հետո կամ 2-3 ժամ անց արյան մեջ կտրուկ նվազում է գլյուկոզի մակարդակը և առաջանում է ծանր վիճակ, ընդհուպ մինչև հիպոգլիկեմիկ կոմա:

Հետազոտական վերլուծությունից պարզվում է, որ մինչև 18 տ երեխաների 70%-ը բուժվում է ինսուլինով, իսկ 30%-ը սննդակարգի պահպանմամբ:

Բուժման ժամանակ անալիտիկ հետազոտությունները ցույց են տվել մի շարք բարդություններ, որոնց թվային տվյալները բերված են (նկ.1-ում)


Նկ. 1



20 տարեկանից բարձր մինչև 70 տարեկան անձանց մոտ հիմնականում ակտորոշված է եղել Տիպ 2 ՇԴ-ը:

Հետազոտությունը իրականացվել է ն 75 հոգի տղամարդկանց և 75 հոգի կանանց փաստաթղթային տվյալների վրա (նկ.2-ում):


Նկ.2



Ըստ իրականացված հետազոտությունների վերը նշված խմբի անձիք բժշկի ցուցումով օգտագործել են հետևյալ դեղամիջոցները՝

- Սուլֆանիլմիզանյութի ածանցյալներ՝
  - Գլիկլագիդ (Դիաբետոն 60մգ, Դիամիկրոն, Պրեդիա)
  - Գլյուբենորմ (Գլիկվիդոն)
  - Գլիմեպիրեդին (Ամարիլ1-4մգ)
- Բիզուանիդինների խմբի պատրաստուկներ՝
  - Գլիֆորմին (Գլուկոֆաժ, Մեթֆորմին, Մեթֆոգամմա)
  - Դիֆորմին-ռետարդ
  - Մեթֆորմին-ռետարդ
- Պերօրալ հիպոգլիկեմիզացնող դեղամիջոցների հետ զուգահեռ, բժշկի ցուցումով Տիպ 2-ՇԴ-բուժելու նպատակով կիրառվել է նաև **Ինսուլին**:  
 Հետազոտությանը մասնակցած անձանց՝ թվով 100 հոգի բուժվել են՝
  - Դիաբետոն 60մգ-օրը մեկ անգամ
  - Մեթֆորմին 500մգ- օրը երկու անգամ
  - Սննդակարգի կարգավորում, սակայն նրանց մոտ գրանցվել է մի շարք կողմնակի ախտաբանական երևույթներ (նկ.3)

Նկ.3




2-րդ խմբի 35 անձ բուժվել են՝

1. Մեթֆորմին 1000մգ- օրը մեկ անգամ, Մեթֆորմին 850մգ- օրը մեկ անգամ
2. Ինսուլին երկարատև ազդեցությամբ երեկոյան ժամը 22:00-ին օրը մեկ անգամ
3. Սննդակարգի կարգավորում


Այստեղ նույնպես նկատվում են բազմաթիվ կողմնակի ազդեցություններ, ընդամենը 27 տոկոսի մոտ օրվա քանակության երևույթներ չեն նկատվել (նկ.4):

նկ.4



3-րդ խմբից 15 անձանց պաթոլոգիական երևույթները (նկ.5):

նկ.5



Շարունակելով հետազոտությունները պարզեցինք, որ Հայաստանում հիմնականում ամենատարածված բուժման միջոցը դա Սուլֆանիլմիդանյութի ածանցյալն է (Դիաբետոն MR 60 մգ-ը):

**Աղյուսակ 3.**

<b>Դիաբեոն 60մգ</b>	
<b>Կողմնակի ազդեցությունները</b>	<b>Նշանակման հակացուցումները (եթե առակ են)</b>
<ul style="list-style-type: none"> <li>▪ Կորոզ է առաջացնել Հիպոգլիկեմիա</li> <li>▪ Վնասում է լյարդը, որը արտահայտվում է մաշկի և աչքերի դեղնությամբ</li> <li>▪ Քոր, կարմրություն, ցանավորում</li> <li>▪ Արյան ձևավոր տարրերի նվազում</li> <li>▪ Ստամոքս-աղիքային տրակտում ցավ</li> <li>▪ Սրտխառնոց, փսխում լուծ կամ փորկապություն</li> <li>▪ Այս երևույթների չլինելու նպատակով դեղամիջոցը ընդունում են ուտելու ժամանակ:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Դիաբետիկ կետոացիդոզ, կետոացիդոզային նախակոմա և կոմա</li> <li>▪ Հղիության բոլոր ժամկետներում և լակտացիայի շրջանում</li> <li>▪ Խոռոչային վիրահատական միջամտության ժամանակ (դադարեցնել ժամանակավորապես և անցնել ինսուլինի)</li> <li>▪ Արյան հիվանդությունների և սոքսիկոալերգիկ վիճակների ժամանակ:</li> </ul>

*Սուլֆանիլմիդաչյութի ածանցյալներից կիրառվում է նաև Ամարիլ1-4մգ (Գլիմեպիրեդին ազդող նյութով)*

**Աղյուսակ 4.**

<b>Ամարիլ1-4մգ (Գլիմեպիրեդին)</b>	
<b>Կողմնակի ազդեցությունները</b>	<b>Նշանակման հակացուցումները (եթե առակ են)</b>
<ul style="list-style-type: none"> <li>✓ <i>Մարտոդական համակարգից՝</i> սրտխառնոց, փսխում, որովայնի ցավ, լուծ, լյարդի տրանսամինազների ակտիվության բարձրացում, խոլեստազ, դեղնախտ, հեպատիտ (մինչև լյարդի անբավարարության զարգացում):</li> <li>✓ <i>Արյունաստեղծ համակարգից՝</i> թրոմբոցիտոպենիա, լեյկոպենիա, էրիթրոպենիա, գրանուլոցիտոպենիա, ագրանուլոցիտոզ, պանցիտոպենիա, հեմոլիտիկ անեմիա:</li> <li>✓ <i>Տեսողության օրգանից՝</i> տեսողության անցողիկ խանգարում:</li> <li>✓ <i>Ալերգիկ ռեակցիաներ՝</i> քոր, եղնջացան, մաշկի ցան; հազվադեպ - շնչառություն, արյան ճնշման անկում, անաֆիլակտիկ շոկ, ալերգիկ վասկուլիտ, ֆոտոզգայունություն: Այս երևույթների չլինելու նպատակով դեղամիջոցը ընդունում են ուտելու ժամանակ:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Շաքարային դիաբետ 1-ին (ինսուլինից կախված),</li> <li>▪ կետոացիդոզ,</li> <li>▪ պրեկոմա,</li> <li>▪ կոմա,</li> <li>▪ լյարդի անբավարարություն,</li> <li>▪ երիկամային անբավարարություն (ներառյալ հեմոդիալիզի հիվանդները),</li> <li>▪ հղիություն, կրծքով կերակրում,</li> <li>▪ մինչև 18 տարեկան երեխաներ և դեռահասներ,</li> <li>▪ գերզգայունություն գլիմեպիրիդի,</li> <li>▪ Սուլֆանիլմիդաչյութի այլ ածանցյալների հետ</li> </ul>

Բիզուանիդինների խմբի դեղամիջոցներից Հայաստանում հիմնականում ամենատարածվածներից են՝ Գլիֆորմինը հիմնականում Մեթֆորմին անվանումով ազդող նյութը-1,1-դիմեթիլ բիզուանիդ հիդրոքլորիդ (Գլիֆորմինը տարբեր դեղարտադրողների կողմից առակա է նաև հետևյալ անվանումներով՝ Մեթֆորմին 500,850,1000մգ, Մեֆորմին Դենկ 500, 850մգ Գլյուկոֆաժ 500, 850, 1000մգ., Սիաֆոր 500,1000մգ, Մետաբետ SR 1000 մգ ):

Շաքարային դիաբետի բուժման համար հաճախակի կիրառվում է Մեթֆորմին դեղամիջոցի 500, 850 և 1000 դոզաները, որոնք նույնպես ունեն իրենց կողմնակի ազդեցությունները և հակացուցումները (աղյուսակ 5)

**Աղյուսակ 5.**

<b>Մեթֆորմին 500,850,1000մգ</b>	
<b>Կողմնակի ազդեցությունները</b>	<b>Նշանակման հակացուցումները (եթե առակ են)</b>
<ul style="list-style-type: none"> <li>✓ 10000-ից մեկի մոտ կարող է առաջացնել Լակտոացիդոզ</li> <li>✓ 10-ից մեկի մոտ առաջանում է՝ Սատամոքս-աղիքային ուղու խանգարումներ՝ սրտխառնոց փսխում, փորլուծություն, որովայնային ցավեր, ախորժակի բացակայություն</li> <li>✓ 100-ից մեկի մոտ կարող է առաջացնել համի զգացողության խանգարում</li> <li>✓ Արյան մեջ Վիտամին B<sub>6</sub>-ի մակարդակի իջեցում</li> <li>✓ 1-ից 10000-ի մոտ մաշկային ռեակցիաներ, քոր , եղնջացան</li> <li>✓ Լյարդի ֆունկցիայի խանգարում կամ բորբոքում</li> </ul> <p>Այս երևույթների կանխելու նպատակով դեղամիջոցը ընդունում են ուտելու ժամանակ կամ ուտելուց անմիջապես հետո:</p>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Ալերգիա</li> <li>❖ Լյարդային անբավարարություն</li> <li>❖ Երեկամների ֆունկցիայի ծանր աստիճանի խանգարումներ</li> <li>❖ Լակտոացիդոզ կամ Կետոացիդոզ</li> <li>❖ Օրգանիզմի ջրազրկման դեպքում</li> <li>❖ Առկա են վարակային ծանր հիվանդություններ</li> <li>❖ Ընդունում եք բուժում սուր սրտային անբավարարության համար</li> <li>❖ Օգտագործում են մեծ քանակությամբ ալկոհոլ;</li> </ul>

Այսպիսով մեր կողմից իրականացված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնելու որ ՇԴ- Տիպ 1-ի բուժման նպատակով կիրառվող Ինսուլինաթերապիան ամենաարդյունավետն է սննդակարգի և ֆիզիկական ակտիվության հետ մեկտեղ: ՇԴ Տիպ 2-ի ժամանակ կիրառվող՝ հիպոգլիկեմիզացնող դեղամիջոցները թողնում են իրենց բացասական ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա, հանգեցնելով տարբեր տեսակի ֆիզիոլոգիական պրոցեսների խաթարմանը: Հետևաբար յուրաքանչյուր ՇԴ-ով հիվանդ պետք է հնարավորին չափով ապահովի իր ֆիզիկական ակտիվությունը և պահպանի սննդակարգը, իհարկե բացառապես բժշկի ցուցումով:

### **Գրականության ցանկ**

1. <https://gabr.org/mps/diabet2.htm> «Сахарный диабет (краткий обзор)» часть 1 2002 год.
2. American Diabetes Association // *Diagnosis and Classification of Diabetes Mellitus*. Diabetes Care, January, vol. 35, 2012, pages 64-71.
3. WHO (World Health Organisation), Type 2 diabetes // <http://www.who.int/mediacentre/factsheets/fs312/en/>.
4. IDF (International diabetes federation) // *One adult in ten will have diabetes by 2030* [http://www.idf.org/media-events/press-releases\\_2011](http://www.idf.org/media-events/press-releases_2011), diabetes-atlas-5th-edition.
5. Khardori R., Griffing G., // *Type 2 Diabetes Mellitus*. <http://emedicine.medscape.com/article/117853-overview#a0156>.
6. Wang J., Luben R, Khaw K.T., Bingham S., Wareham N.J., Forouhi N.G. // *Dietary energy density predicts the risk of incident type 2 diabetes*, Diabetes Care. Nov 2008; 31(11), pages 2120-2125.
7. Վիճակագրություն, Տարեկան ցուցանիշներ, 2012, 2014 // <http://www.moh.am>.
8. George Alberti, Paul Zimmet, Jonathan Shaw, Zachary Bloomgarden, Francine Kaufman, Martin Silink // *Type 2 Diabetes in the Young: The Evolving Epidemic*. Diabetes Care July 2004 vol. 27 no. 7, pages 1798-1811.
9. Bacha F., Lee S., Gungor N., Arslanian S.A. // From pre-diabetes to type 2 diabetes in obese youth: pathophysiological characteristics along the spectrum of glucose dysregulation. Diabetes Care. Oct 2010, 33(10), page 2225-2231.
10. Wheeler E, Barroso I. // Genome-wide association studies and type 2 diabetes. Brief Funct Genomics. Mart 2011,10 (2), pages 52-60.
11. Scott M. Grundy, Chair; Ivor J. Benjamin, Gregory L. Burke, Alan Chait, Robert H. Eckel, Barbara V. Howard, William Mitch, Sidney C. Smith Jr, James R. Sowers. Diabetes and Cardiovascular Disease, Circulation.1999; 100: pages 1134-1146.
12. Moran C., Phan T., Chen J., et al. Brain atrophy in type 2 diabetes: regional distribution and influence on cognition. // Diabetes Care. Aug 12 2013 pages 4036-4042.
13. Jeffcoate W.J, Harding K.G. //Diabetic foot ulcers. Lancet, 2003 May 3. 361(9368): pages 1545-1551.
14. Клиническая патофизиология: Учеб. пособие для студентов вузов / Алмазов В. А.. — издание 3-е, переработанное и дополненное. — Санкт-Петербург гос. мед. ун-т им. И. П. Павлова; М.: ВУНМЦ: Питер, 1999. — стр. 209—213.
15. Каминский А. В., Коваленко А. Н. Сахарный диабет и ожирение: клиническое руководство по диагностике и лечению Киев, 2010. стр, 256-298.
16. J. Larry Jameson, Leslie J De Groot, David Morritz de Kretser, Linda C. Giudice, Ashely B Grossman, Shlomo Melmed, John T Potts Jr., Gordon C Weir Endocrinology: Adult & Pediatric 7th Edition. Elsevier. 2016. pages 664-669

17. Լ. Թ. Ասատրյան «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» 2011թ. 190 էջ.
18. Յ.Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, «Մանկավարժություն» 2005թ. 444 էջ.
19. <https://diabetesatlas.org/> «**IDF Diabetes Atlas - 7th Edition**»

## ЛЕКАРСТВЕННЫЕ СРЕДСТВА, ПРИМЕНЯЕМЫЕ ПРИ ЛЕЧЕНИИ САХАРНОГО ДИАБЕТА, И СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ИХ ПОБОЧНЫХ ЭФФЕКТОВ В МЕДИЦИНСКОЙ ПРАКТИКЕ.

<sup>1</sup>Գ.Վ. Գասպարյան, <sup>2</sup>Մ.Ս. Մկրտչյան

1. *Научно-технологический центр органической фармацевтической химии НАН РА*
2. *Ереванский университет Айбуска*

Сахарный диабет по своей распространенности считается заболеванием века, поражающим практически все возрастные группы населения, становясь одной из главных угроз здоровью населения планеты. По данным Всемирной организации здравоохранения (2019 г.), около 46 миллионов человек в мире страдают диабетом, из них 80% проживают в странах с низким и средним уровнем жизни. По прогнозам Всемирной организации здравоохранения и Международной диабетической федерации (IDF), в 2040 г. число больных диабетом во всем мире составит 642 миллиона. Учитывая вышеизложенное, изучено наличие побочных эффектов у препаратов, применяемых при сахарном диабете. С помощью специального, заранее запланированного опросника были выявлены побочные эффекты у пациентов и описаны во вкладыше. Целью исследования было повысить благосостояние и качество жизни людей с диабетом и их семей посредством повышения осведомленности, а также исследования и анализа побочных эффектов лекарств от диабета. Исследования показали, что дети до 18 лет относятся к диабету 1 типа и в основном лечатся инсулином и обязательной диетой, но имеют свои нежелательные явления: аллергические реакции, инсулиновые отеки, гипогликемические состояния. Мы обнаружили, что инсулинотерапия, используемая для лечения СД 1 типа, наиболее эффективна наряду с диетой и физической активностью. Гипогликемические препараты, применяемые при сахарном диабете 2 типа, оказывают негативное воздействие на организм человека, приводя к нарушению различных физиологических процессов.

**Ключевые слова:** диабет, гипергликемия, лекарства, побочные эффекты, статистика.



## MEDICINES USED IN THE TREATMENT OF DIABETES MELLITUS AND STATISTICAL ANALYSIS OF THEIR SIDE EFFECTS IN MEDICAL PRACTICE

<sup>1</sup>H.V. Gasparyan, <sup>2</sup>H..S. Mkrtchyan

1. *Scientific and Technological Center of Organic Pharmaceutical Chemistry of the NAS RA*

2. *Yerevan Haybusak University*

Due to its high prevalence, diabetes mellitus is considered a disease of the century, affecting almost all age groups of the population, and becoming one of the main threats to the health of the world population. According to the World Health Organization (2019), approximately 46 million people worldwide have diabetes, of which 80% live in low- and middle-income countries. The World Health Organization and the International Diabetes Federation (IDF) predict that there will be 642 million people with diabetes worldwide in 2040. Taking into account the above mentioned the side effects of drugs used for diabetes mellitus treatment have been studied.

Using a special, pre-planned questionnaire, side effects in patients were identified and described from the instruction leaflets. The purpose was to improve the well-being and quality of life of people with diabetes and their families through increased awareness and research and analysis of the side effects of diabetes medications. Studies have shown that children under 18 years of age are classified as type 1 diabetes and are mainly treated with insulin and a mandatory diet, but have reported adverse reactions: allergic reactions, insulin edema, hypoglycemic conditions. etc. We found that insulin therapy used to treat type 1 diabetes is most effective when combined with diet and physical activity. Hypoglycemic drugs used for type 2 diabetes mellitus have a negative effect on the human body, leading to disruption of various physiological processes.

**Keywords:** Diabetes, hyperglycemia, medications, side effects, statistics.

**«ՀԵՊԱՐԻՆԻ ՆԱՏՐԻՈՒՄԱԿԱՆ ԱՂ 5000  
ԱՄ/մլ» ԼՈՒԾՈՒՅԹԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**Վ. Ղազոյան, Ս. Գրիգորյան**

*Երևանի Հայրուսակ Համալսարան*

*Մուտք՝ 02.05.24, գրախոսում՝ 13.05, ընդունված է տպագրության՝ 17.07*

**Ամփոփագիր.** Ուսումնասիրվել է «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունությունը դեղի գրանցման գործընթացում: Այն կարևորվում է նրանով, որ Հայաստանում այս դեղաձևը քանակով ամենաշար գրանցվածներից է, հեղուկաբար՝ բնակչության կողմից ամենաշար օգտագործվողներից, ինչից ելնելով պարզել ենք, թե որ տվյալներն են վկայում դեղի որակյալ լինելու մասին:

**Հիմնաբառեր.** *հեպարին, նապրիումական աղ, դեղահաբ, որակ, կայունություն*

**Ներածություն**

Դեղերի կայունության ուսումնասիրությունը խիստ կարևոր է, քանզի այն հնարավորություն է տալիս հասկանալու դեղի պահպանման ժամկետը, որն էլ իր հերթին թույլ է տալիս պարզել դեղի առաջնային փաթեթավորման օպտիմալ քանակը և եղանակը, ինչպես նաև արտադրության ծավալները՝ ելնելով շուկայի պահանջարկից:

Ներկայումս հայտնի են Հեպարինի տարբեր դեղաձևեր, դրանք են՝ ներարկման լուծույթները, արտաքին օգտագործման գելերը և քսուլները [1]: Հեպարինը, որպես կանոն չի հանդիպում ներքին ընդունման դեղաձևերի տեսքով (դեղահատեր, պարկուճներ, ներքին ընդունման լուծույթներ և այլն), քանի որ այն չի ներծծվում, հիմնականում մոլեկուլի մեծ չափսերի և պոլիանիոնային լիցքի պատճառով [2]:

Դեղերի կայունության ուսումնասիրությունը դեղի գրանցման համար անհրաժեշտ նախապայման է դարձել համեմատաբար ուշ, մասնավորապես՝ երբ 1960-1970-ական թվականներին տարբեր երկրներում դեղերի մասին օրենքների թվի կտրուկ աճին զուգահեռ առաջացավ դրանց ներդաշնակեցման անհրաժեշտություն: Ներկայումս հասանելի են նույն դեղանյութը պարունակող մի դեղի տարբեր դեղաձևեր, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես մի շարք դեղաբանական, այնպես էլ որակական հատկանիշներով: Վերջիններիս պատճառով անհրաժեշտություն կա ուսումնասիրել տարբեր դեղաձևերի կայունությունը առանձին-առանձին:

Ուսումնասիրվել է «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի

կայունությունը դեղի գրանցման գործընթացում՝ հաշվի առնելով, որ նշված դեղաձևը Հայաստանում ամենաշատն է գրանցված և օգտագործվում բնակչության կողմից:

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ դեղի տվյալ դեղաձևերի գրանցման ժամանակ կայունության արդյունքների տրամադրման ընդհանուր օրինաչափությունները համընկնում են նոր դեղերի կայունության արդյունքների տրամադրման օրենքների և դրույթների հետ: «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի համար դուրս են բերվել ընդունելի չափանիշներ՝ ելնելով նախնական թեստի արդյունքից: Այս դեղաձևի ամերիկյան դեղագիրքը տալիս է ընդունելի տվյալների ցանկն իր սահմանային արժեքներով:

### **Փորձնական մաս**

Աշխատանքի ընթացքում որպես հիմք օգտագործվել են հետևյալ հղումները՝

- <https://www.fda.gov/>
- <https://www.ema.europa.eu/en>
- <https://ich.org/>
- <http://pharm.am/index.php/am/>

Նոր դեղաձևերի կայունության ուսումնասիրության ընդունելի դրույթները ներկայացված են [3]-ում, որը պահանջում է, որ նոր դեղաձևի գրանցման համար հարկ է օգտվել նույն դրույթներից, որոնք ներկայացվում են նոր դեղի հաստատման համար, այսինքն՝ նոր դեղաձևերի կայունության ապահովման արձանագրությունները, սկզբունքորեն, պետք է համապատասխանեն սկզբնական արտադրանքի կայունության ուղեցույցում պարունակվող պահանջներին: Այնուամենայնիվ, ներկայացման պահին կայունության կրճատված տվյալների բազան (օրինակ՝ արագացված 6 ամսվա տվյալներ և երկարաժամկետ 6 ամսվա տվյալներ ընթացիկ ուսումնասիրություններից) կարող է ընդունելի լինել որոշակի հիմնավորվածության դեպքերում:

Ուսումնասիրվել է «Գրանցված դեղերի տեղեկատուն», որը ներկայացնում է ՀՀ-ում գրանցված դեղերի ցանկը [4]: Այստեղ տրված են դեղի բրենդային և ջեներիկ անունները, դեղաձևը, դոզավորումը, արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, գրանցման վավերականության ժամանակահատվածը, ինչպես նաև այն, թե արդյոք տվյալ դեղը պետք է գնվի միայն դեղատոմսով, թե ոչ (OTC):

«Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի [5, 6]-ում տրված ԱԹՔ կոդով, այն է՝ B01AB01, պարզել ենք, որ ՀՀ-ում գրանցված են միայն Հեպարինի հետևյալ դեղերը՝

- Heparin-Belmed 5000 ԱՄ/մլ, 5մլ-ոց ապակյա ամպուլաներ, 5 ամպուլա 1 տուփի մեջ, արտադրող՝ Belmedpreparaty, Բելառուս,

- Heparin-Indar 5000 ԱՄ/մլ, 5մլ-ոց ապակյա ամպուլաներ, 5 ամպուլա 1 տուփի մեջ, արտադրող՝ INDAR, Ուկրաինա, Հեպարին նրբաքսուք, 100 ԱՄ/գ + 40 մգ/գ + 08 մգ/գ, պլաստիկ պարկուճ, արտադրող՝ Nizhpharm CJSC, Ռուսաստան:

Փնտրման արդյունքների ընդհանուր պատկերը տրված է նկ. 1-ում:

N	Trade name	Generic name	Dosage form	Dosage strength	Country	Manufacturer	Registered till	Dispensing by	Under Control	Membership of country of origin	Image view	3D object view
1	Heparin-Beimart	heparin (heparin sodium)	solution for IV and SC injection	5000 IU/ml (1) glass vial 5ml, (3) glass vials 5ml	Belarus	Belaruspharmacy RUE, 220007, Minsk, Fabritsum St., 36, No.2, Belarus for Belaruspharmacy RUE, 220007, Minsk, Fabritsum St., 36, Belarus	26.12.2024	Prescription	-	EAEU	<a href="#">Image View</a>	<a href="#">3D View</a>
2	Heparin-Indar	heparin sodium	solution for injection	5000 IU/ml (3) glass vial 5ml, (100) glass vial 5ml	Ukraine	PhSC "On the production of similar" "INDAR", 02099, Kyiv, 7 Zvezdovskaya st	12.10.2027	Prescription	-	FSC-5	<a href="#">Image View</a>	<a href="#">3D View</a>
3	Heparin ointment	heparin (heparin sodium), benzocaine, benzyl alcoholate	ointment for external use	1000 IU/g+4mg/g+0.5mg/g, 25g aluminum or plastic tube	Russia	Nizhpharm FSC, 601105, Nizhny Novgorod, Sadganskaya st., 7	29.07.2027	OTC	-	EAEU	<a href="#">Image View</a>	<a href="#">3D View</a>

Նկ. 1. [4]-ում Հեպարինի տարբեր դեղաձևերի փնտրման արդյունքները:

ՀՀ-ում գրանցված Հեպարինի երեք դեղաձևերից երկուսի կայունության պայմանները հետազոտվել են այս աշխատանքում՝ լուծույթների գրանցմանը առաջադրվող ստանդարտներով [4]:

«Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթը ունի հետևյալ առանձնահատկությունները [4]՝

1. Պահման ժամկետ՝ 2 տարի,
2. Պահման պայմաններ՝ 25 °C-ից ոչ բարձր ջերմաստիճան:

Նույն արդյունքները տալիս են նաև [5, 6]-ը:

Սենյակային ջերմաստիճանում պահվող դեղերի կայունության պայմանները տրված են [7]-ում, որոնց ուսումնասիրության արդյունքները տրված են աղ. 1-ում:

Աղ. 1: Սենյակային ջերմաստիճանում պահվող դեղերի գրանցման ժամանակ կայունության ուսումնասիրության պայմանները:

Ուսումնասիրություն	Պահպանման պայմանները	տվյալների ուսումնասիրության նվազագույն ժամանակը	Լրացուցիչ տեղեկություն
Երկարա-ժամկետ*	25°C ± 2°C/60% <math>\leq t \leq 5\%</math> <math>\leq t \leq 30^\circ\text{C} \pm 2^\circ\text{C}/65\%</math> <math>\leq t \leq 5\%</math> <math>\leq t</math>	12 ամիս	Ընկերությունը ինքն է որոշում՝ երկարաժամկետ կայունության ուսումնասիրությունը կատարել 25°C ± 2°C/60% <math>\leq t \leq 5\%</math> <math>\leq t</math> թե՛ 30°C ± 2°C/65% <math>\leq t \leq 5\%</math> <math>\leq t</math> պայմաններում:

Միջանկյալ**	30°C ± 2°C/65% <math>\leq</math> ՀԽ ± 5% <math>\leq</math> ՀԽ	6 ամիս	30°C ± 2°C / 65% <math>\leq</math> ՀԽ ± 5% <math>\leq</math> ՀԽ-ի դեպքում միջանկյալ ուսումն. չի կատարվում:
Արագացված	40°C ± 2°C/75% <math>\leq</math> ՀԽ ± 5% <math>\leq</math> ՀԽ	6 ամիս	-

Եթե երկարաժամկետ ուսումնասիրություններն իրականացվում են 25°C ± 2°C/60% <math>\leq</math> ՀԽ ± 5% <math>\leq</math> ՀԽ պայմաններում, և ուսումնասիրության ժամանակ փորձարկման 6 ամիսների ընթացքում տեղի է ունենում որևէ էական փոփոխություն, ապա միջանկյալ ուսումնասիրության ժամանակ պետք է իրականացվեն լրացուցիչ փորձարկումներ և գնահատվեն ըստ էական փոփոխության չափանիշների:

**Աղ 2:** «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ուսումնասիրման հաճախությունը բոլոր հնարավոր երեք տիպի փորձարկումների համար:

Ուսումնասիրություն	Ուսումնասիրության հաճախականություն
Երկարաժամկետ	0, 3, 6, 9, 12, 18, 24-րդ ամիսներին
Միջանկյալ	0, 6, 12, 24-րդ ամիսներին
Արագացված	0, 3, 6-րդ ամիսներին

Արագացված կայունության ուսումնասիրության համար ընդունելի են վեց ամսվա տվյալներ, ամենաքիչը երեք ժամանակահատվածի համար, որում ներառված են սկզբնական և վերջնական ժամանակահատվածների արդյունքները (օրինակ՝ 0, 3, 6-րդ ամիսներին) [7]:

Միջանկյալ կայունության ուսումնասիրության համար ընդունելի են ամենաքիչը չորս ժամանակահատվածի տվյալներ, ներառյալ սկզբնական և վերջնական ժամանակահատվածները [7]:

Ինչպես արդեն նշվել է՝ «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի պահման ժամկետը 2 տարի է [5,6]:

Վերոնշյալը հաշվի առնելով, դուրս են բերվել «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ուսումնասիրման հաճախությունը բոլոր հնարավոր երեք տիպի փորձարկումների համար: Արդյունքները տրված են աղ. 2-ում:

Հաջորդիվ ուսումնասիրվել է «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի ամերիկյան դեղագրքային հոդվածը (USP՝23/), որից դուրս են բերվել լուծույթին բնորոշ հատկանիշների նկարագրությունները և սահմանները: Դրանց վրա հաշվարկվել են ընդունելի չափանիշները, որոնք պետք է հաշվի առնել դեղի կայունության ուսումնասիրման ժամանակ: Տվյալները ներկայացված են աղ. 3-ում:

Լրացուցիչ պահանջներ՝ պահման պայմաններ՝ լույսից պաշտպանված վայրում, սենյակային ջերմաստիճանում [8]:

Որպես սենյակային ջերմաստիճան բերվում են  $25^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}/60\%$  ՀԽ  $\pm 5\%$  ՀԽ կամ  $30^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}/65\%$  ՀԽ  $\pm 5\%$  ՀԽ պայմանները՝ կախված, թե տվյալ երկիրը որ տարածա-շրջանում է գտնվում [9]: Օրինակ՝ III և IV կլիմատիկ զոնաներում գտնվող երկրների դեպքում (Արաբական Միացյալ Էմիրություններ, Սինգապուր և այլն) պետք է ներկայացնել կայունության տվյալներ՝ որպես երկարաժամկետ կայունության պայման բերելով  $30^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}/65\%$  ՀԽ  $\pm 5\%$  ՀԽ պայմանները: Այս դեպքում միջանկյալ կայունության տվյալների ներկայացման անհրաժեշտություն չկա:

ՀՀ-ում դեղի գրանցման համար պետք է, որպես երկարատև կայունության ուսումնասիրման պայմաններ ներկայացնել  $25^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}/60\%$  ՀԽ  $\pm 5\%$  ՀԽ, ինչպես նաև ներկայացնել ստացված միջանկյալ կայունության ուսումնասիրության արդյունքները [9]:

**Աղ. 3:** «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի բնորոշ հարկանիշների նկարագրու-թյունը, սահմանները ըստ USP-ի դեղագրքային հոդվածի և սրացված հաշվարկային չափանիշները:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	Հաշվարկված չափանիշներ
Արտաքին տեսք	Թափանցիկ, անգույն կամ բաց դեղին գույնի հեղուկ	Թափանցիկ, անգույն կամ բաց դեղին գույնի հեղուկ
Ծավալ	90-110%	4,5-5,5մլ
pH	5,0-7,5	5,0-7,5
Քանակական չափանիշները	5000 ԱՄ/մլ	25000 ԱՄ/5մլ (90-110%): Ստորին սահման՝ 22500 ԱՄ/5մլ, վերին սահման՝ 27500 ԱՄ/5մլ

### Արդյունքների քննարկում

Դուրս բերելով [7]-ից դեղերի համար էական փոփոխությունների արժեքները և համեմատելով «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի հիմնական առանձնահատկությունների հետ՝ ստացվել են «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի չափման հնարավոր արժեքները: Արդյունքները բերված են աղ. 4-ում:

Աղյուսակ 4-ից պարզ է դառնում, որ «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի համար կրիտիկական են քանակական թեստի չափանիշների փոփոխությունը, արտաքին տեսքի, ֆիզքիմիական բնութագրերի և ֆունկցիոնալության չափանիշների փոփոխությունը, ինչպես նաև pH-ի չափանիշի փոփոխությունը:

Քանակական ցուցանիշների տվյալները հաշվվել են՝ ելնելով այն դրույթներից, որ այս թեստի չափանիշների համար էական փոփոխություն

է համարվում նախնական արդյունքից 5% շեղումը, իսկ դեղագրքային հոդվածում ընդունելի է 90%-110% սահմանը:

Քանակական որոշման ընդունելի տվյալների սահմանները հաշվարկվել են հետևյալ կերպ՝ հաշվարկվել է սկզբնական թեստի սրդյունքի 5%-ը, որը հանվել է գումարվել է սկզբնական թեստի արդյունքի հետ:

Ստացված սահմանը համեմատվել է դեղագրքային հոդվածում բերված սահմանի հետ:

Այն դեպքում, երբ հաշվարկված սահմանը համընկել կամ ներառված է եղել դեղագրքային հոդվածում բերված սահմանի հետ, այն գրանցվել է որպես ընդունելի սահման կայունության հետագա ամիսների համար:

Այն դեպքում, երբ հաշվարկված սահմանը չի համընկել և/կամ ներառված եղել դեղագրքային հոդվածում բերված սահմանի հետ, որպես վերին և/կամ ստորին ցուցանիշ (կախված նրանից, թե որ մեկը չի համընկել) բերվել է դեղագրքային հոդվածում բերված ցուցանիշը:

Հաշվի առնելով [10]-ում բերված ուսումնասիրությունների հաճախությունների դրույթները որոշում է կայացվել ընդունելի տվյալները ներկայացնել այն հաճախությամբ, որը բերված է աղ. 2-ում:

Որպես քանակական որոշման 3-րդ կետ երկարաժամկետ ուսումնասիրությունների համար ընտրվել են 22510 ԱՄ/5մլ, 25420 ԱՄ/5մլ և 26900 ԱՄ/5մլ ցուցանիշները:

Ստացված արդյունքները ներկայացված են աղ. 5-7-ում:

Միջանկյալ ուսումնասիրությունների համար ընտրվել են 0, 6, 12, 24 ամիսները:

Որպես զրոյական ժամանակի արդյունքներ ընտրվել են 22650 ԱՄ/5մլ, 25530 ԱՄ/5մլ և 27430 ԱՄ/5մլ քանակական ցուցանիշները:

Ստացված արդյունքները ներկայացված են աղ. 8-10-ում:

Արագացված ուսումնասիրությունների համար որոշվել է ներկայացնել չորս ժամանակահատված՝ սկզբնական, երրորդ և վեցերորդ ամիսների տվյալները:

Որպես զրոյական ժամանակահատվածի արդյունքներ ընտրվել են 22590 ԱՄ/5մլ, 25520 ԱՄ/5մլ և 27360 ԱՄ/5մլ քանակական ցուցանիշները:

Ստացված արդյունքները տրված են աղ. 11-13-ում:

Հաջորդ ուսումնասիրված ցուցանիշը pH-ն է: Քանի որ pH-ի համար, որպես կրիտիկական կետ աղ. 4-ում գրված է ընդհանուր կետ՝ «pH-ի չափանիշի անհամապատասխանություն», իսկ ըստ [11]-ի և [12]-ի՝ շեղում է համարվում «pH-ի չափանիշի անհամապատասխանություն», որպես ընդունելի չափանիշ բոլոր դեպքերի համար դուրս է բերվել աղ. 3-ում բերված «5,0-7,5» արդյունքը: Ժամանակահատվածների ընտրությունը կատարվել է այնպես, ինչպես քանակական որոշման դեպքում: Տվյալները տրված են աղ. 14-22-ում:

Վերջին ուսումնասիրման չափանիշն արտաքին տեսքն է: Աղ. 3-ում այս չափանիշի համար գրված է ընդհանուր պահանջ՝ «Թափանցիկ, անգույն կամ

բաց դեղին գույնի հեղուկ», իսկ աղ. 4-ում, որպես կրիտիկական կետ գրված է՝ «Արտաքին տեսքի, ֆիզ-քիմիական բնութագրերի և ֆունկցիոնալության չափանիշներին անհամապատասխանություն (գույն, ֆազերի առանձնացում, կարծրացում, կոնցենտրացիայի փոփոխություն)»:

**Աղ. 4:** «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի հիմնական առանձնահատկությունների և դեղերի համար էական փոփոխությունների արժեքների համեմատական բնութագիր:

Էական փոփոխությունների արժեք համաձայն [7]-ի	Կարելի է արդյոք չափումն իրականացնել «Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի համար: Այո/Ոչ
Քանակական թեստի չափանիշների փոփոխություն 5% - ով՝ սկզբնական ցուցանիշի համեմատ, ինչպես նաև կենսաբանական կամ իմունաբանական ընթացակարգերի արդյունավետության չափանիշների անհամապատասխանություն:	Այո
Ցանկացած տարրալուծման պրոցեսի արդյունք, որը գերազանցում է ընդունելի չափանիշը:	Ոչ
Արտաքին տեսքի, ֆիզքիմիական բնութագրերի և ֆունկցիոնալության չափանիշներին անհամապատասխանություն (օրինակ՝ գույն, ֆազերի առանձնացում, կարծրացում, կոնցենտրացիայի փոփոխություն: Այնուամենայնիվ, արագացված ուսումնասիրությունների ժամանակ կարելի է ակնկալել ֆիզիկական բնութագրերի որոշ փոփոխություններ (օրինակ՝ մոմիկների փափկացում, քսուքների հալեցում):	Այո
ՐH-ի չափանիշի անհամապատասխանություն:	Այո
Տարրալուծման չափանիշների անհամապատասխանություն 12 միավոր դեղաչափի համար:	Ոչ

«Հեպարինի նատրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները արտաքին տեսքի համար թե՛ երկարատև, թե՛ միջանկյալ և թե՛ արագացված ուսումնասիրությունների ժամանակ միշտ պետք է լինի թափանցիկ, անգույն կամ բաց դեղին գույնի հեղուկ:



ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, հատոր 11, 2024

**Աղ. 5:** «Հեպարիտի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 22510 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում երկարաժամկետ ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշ	0 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս	18 ամիս	24 ամիս
Քանակական չափանիշները	22500 և 27500 ԱՄ/5մլ	22510 ԱՄ/5մլ	22500-23635.5 ԱՄ/5մլ	22500-23635.5 ԱՄ/5մլ	22500-23635.5 ԱՄ/5մլ	22500-23635.5 ԱՄ/5մլ	22500-23635.5 ԱՄ/5մլ	22500-23635.5 ԱՄ/5մլ

**Աղ. 6:** «Հեպարիտի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 25420 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում երկարաժամկետ ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս	18 ամիս	24 ամիս
Քանակական չափանիշներ	22500 և 27500 ԱՄ/5մլ	25420						
ԱՄ/5մլ	24149-26691 ԱՄ/5մլ	24149-26691 ԱՄ/5մլ	24149-26691 ԱՄ/5մլ	24149-26691 ԱՄ/5մլ	24149-26691 ԱՄ/5մլ	24149-26691 ԱՄ/5մլ		

**Աղ. 7:** «Հեպարիտի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 26900 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում երկարաժամկետ ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս	18 ամիս	24 ամիս
Քանակական չափանիշները	22500 և 27500 ԱՄ/5մլ	26900 ԱՄ/5մլ	25555-27500 ԱՄ/5մլ	25555-27500 ԱՄ/5մլ	25555-27500 ԱՄ/5մլ	25555-27500 ԱՄ/5մլ	25555-27500 ԱՄ/5մլ	25555-27500 ԱՄ/5մլ

**Աղ. 8:** «Հեպարիտի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 22650 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում միջանկյալ ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
Քանակական չափանիշները	22500 և 27500 ԱՄ/5մլ	22650 ԱՄ/5մլ	22500-23782.5 ԱՄ/5մլ	22500-23782.5 ԱՄ/5մլ

**Աղ. 9:** «Հեպարիտի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 25530 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում միջանկյալ ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
Քանակական չափանիշները	22500 ԱՄ/5մլ-27500 ԱՄ/5մլ	25530 ԱՄ/5մլ	24253.5-26806.5 ԱՄ/5մլ	24253.5-26806.5 ԱՄ/5մլ

**Աղ. 10:** «Հեպարինի նադրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 27430 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում միջանկյալ ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
Քանակական չափանիշները	22500 ԱՄ/5մլ-27500 ԱՄ/5մլ	27430 ԱՄ/5մլ	26058.5-27500 ԱՄ/5մլ	26058.5-27500 ԱՄ/5մլ

**Աղ. 11:** «Հեպարինի նադրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 22590 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում արագացված ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
Քանակական չափանիշները	22500 ԱՄ/5մլ-27500 ԱՄ/5մլ	22590ԱՄ/5մլ	22500-23719.5 ԱՄ/5մլ	22500-23719.5 ԱՄ/5մլ

**Աղ. 12:** «Հեպարինի նադրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 25520 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում արագացված ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
Քանակական չափանիշները	22500 ԱՄ/5մլ-27500 ԱՄ/5մլ	25520 ԱՄ/5մլ	24244-26796 ԱՄ/5մլ	24244-26796 ԱՄ/5մլ

**Աղ. 13:** «Հեպարինի նադրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները 27360 ԱՄ/5մլ սկզբնական արդյունքի դեպքում արագացված ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
Քանակական չափանիշները	22500 ԱՄ/5մլ-27500 ԱՄ/5մլ	27360 ԱՄ/5մլ	25992-27500 ԱՄ/5մլ	25992-27500 ԱՄ/5մլ

**Աղ. 14:** «Հեպարինի նադրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 5.3 սկզբնական արդյունքի դեպքում երկարապլև ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշ	0 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս	18 ամիս	24 ամիս
pH	5.0-7.5	5.3	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 15:** «Հեպարինի նադրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 7.4 սկզբնական արդյունքի դեպքում երկարապլև ուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշ	0 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս	18 ամիս	24 ամիս
pH	5.0-7.5	7.4	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 16:** «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 6.2 սկզբնական արդյունքի դեպքում երկարաժամկետ նուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշ	0 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս	18 ամիս	24 ամիս
pH	5.0-7.5	6.2	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 17:** «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 6.8 սկզբնական արդյունքի դեպքում միջանկյալ նուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
pH	5.0-7.5	6.8	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 18:** «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 5.5 սկզբնական արդյունքի դեպքում միջանկյալ նուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
pH	5.0-7.5	5.5	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 19:** «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 7.3 սկզբնական արդյունքի դեպքում միջանկյալ նուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
pH	5.0-7.5	7.3	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 20:** «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 7.1 սկզբնական արդյունքի դեպքում արագացված նուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
pH	5.0-7.5	7.1	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 21:** «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 5.8 սկզբնական արդյունքի դեպքում արագացված նուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
pH	5.0-7.5	5.8	5.0-7.5	5.0-7.5

**Աղ. 22:** «Հեպարինի նապրիումական աղ 5000 ԱՄ/մլ» լուծույթի կայունության ընդունելի չափանիշները pH-ի 6.4 սկզբնական արդյունքի դեպքում արագացված նուսումնասիրությունների ժամանակ:

Ցուցանիշ	Ընդունելի չափանիշներ	0 ամիս	3 ամիս	6 ամիս
pH	5.0-7.5	6.4	5.0-7.5	5.0-7.5

### **Գրականության ցանկ**

1. <https://www.vidal.ru/drugs/heparin>
2. Shaker A. Mousa, PhD, Fuming Zhang, PhD, Ahmad Aljada, PhD, Seema Chaturvedi, PhD, Majde Takieddin, MS, Haifeng Zhang, Lianli Chi, PhD, M. Cristina Castelli, PhD, Kristen Friedman, MPH, Michael M. Goldberg, MD, and Robert J. Linhardt, PhD, Pharmacokinetics and Pharmacodynamics of Oral Heparin Solid Dosage Form in Healthy Human Subjects, PubMed, 2007 Dec;47(12):1508-20.
3. <https://www.ema.europa.eu/en>
4. <http://pharm.am/index.php/am/>
5. Инструкция по применению гепарин 5000ме/мл 5мл 5 шт. раствор для внутривенного и подкожного введения.
6. [https://ec.europa.eu/health/documents/community-egister/1998/199803182950/anx\\_2950\\_en.pdf](https://ec.europa.eu/health/documents/community-egister/1998/199803182950/anx_2950_en.pdf)
7. International Conference on Harmonisation of Technical Requirements for Registration of Pharmaceuticals for Human Use. Stability Testing of New Drug Substances and Products Q1A(R2). 2003, 18 p.
8. Heparin Sodium (USP37-NF32), 1 p.
9. World Health Organization. Stability testing of active pharmaceutical ingredients and finished pharmaceutical products. Annex 10. 2018. 44 p.
10. International Conference on Harmonisation of Technical Requirements for Registration of Pharmaceuticals for Human Use. The Common Technical Document For The Registration Of Pharmaceuticals For Human Use: Quality – M4Q(R1) Quality Overall Summary Of Module 2 and Module 3: Quality. 2002, 18 p.
11. US Food and Drug Administration, Guidance for Industry, Q1C Stability Testing for New Dosage Forms, 1996, 3 p.
12. International Conference on Harmonisation of Technical Requirements for Registration of Pharmaceuticals for Human Use. Stability Testing for New Dosage Forms Q1C. 1996, 3 p.

## АНАЛИЗ ДАННЫХ СТАБИЛЬНОСТИ РАСТВОРА «ГЕПАРИНА НАТРИЕВАЯ СОЛЬ 5000 ЕД/мл» В ПРОЦЕССЕ РЕГИСТРАЦИИ ЛЕКАРСТВЕННОГО ПРЕПАРАТА

**В.Газоян, Г.Григорян**

*Ереванский университет Айбусак*

Исследование стабильности лекарственного средства дает возможность понять сроки годности лекарственного препарата, что, в свою очередь, является основой для понимания оптимального количества и способа первичной упаковки при производстве лекарственного средства, а также объемов производства, исходя из спроса рынка.

В настоящее время известны различные лекарственные формы гепарина: растворы для инъекций, гели для наружного применения и кремы. Гепарин, как правило, недо-ступен в виде лекарственных форм для внутреннего применения (таблетки, капсулы, растворы для внутреннего применения и др.), поскольку не абсорбируется при внутрен-нем применении, главным образом, из-за большого размера молекулы и полианионного заряда.

Изучение данных о стабильности раствора «Гепарина натрия соль 5000 ЕД/мл» в процессе регистрации лекарственного препарата актуально в связи с тем, что в Арме-нии эта лекарственная форма является наиболее регистрируемой по количеству, следо-вательно, наиболее используемой населением, исходя из чего важно понять, какие дан-ные свидетельствуют о качестве препарата.

**Ключевые слова:** гепарин, натриевая соль, таблетка, качество, стабильность

## ANALYSIS OF THE STABILITY DATA OF "HEPARIN SODIUM SALT 5000 IU/ML" SO-LUTION DURING THE REGISTRATION PROCESS OF THE DRUG

**V.Khazoyan, H.Grigpryan**

*Yerevan Haybusak University*

The study of drug stability provides an opportunity to understand the shelf life of the drug, which is the basis for understanding the optimal amount and method of primary pack-aging during drug production, as well as production volumes based on market demand.

Various dosage forms of Heparin are known, such as injection solutions, gels for external use, and creams. Heparin, as a rule, is not available in the form of dosage forms for internal administration (tablets, capsules, solutions for internal administration, etc.), because it is not absorbed during internal administration, mainly due to the large size of the molecule and the polyanionic charge.

Studying of stability data of "Heparin sodium salt 5000 IU/ml" solution during the drug registration process is important because in Armenia this dosage form is the most registered in quantity and, therefore, the most used by the population, based on which it is important to understand which data indicate the quality of the drug.

**Keywords:** heparin, sodium salt, pill, quality, stability

## ОКСИДАТИВНОЕ ПОВРЕЖДЕНИЕ БЕЛКОВ ГЛОБУЛИНОВОЙ ФРАКЦИИ СЫВОРОТКИ КРОВИ У ПОДОПЫТНЫХ ЖИВОТНЫХ

**Асмик Ваградян**

*Ереванский государственный медицинский университет им. М.Гераци  
Медицинский институт Ереванского университета “Айбусак”  
Поступила 23.06.24, рецензирована 05.07, принята 17.07*

**Аннотация:** Было изучено соотношение уровней антиоксидантных и прооксидантных металлопротеинов в различных возрастных группах подопытных животных. Выявлено смещение уровня в сторону прооксидантных конъюгированных белков, что является достоверным показателем оксидантного повреждения белков глобулиновой фракции сыворотки крови при старении.

**Ключевые слова:** подопытные животные металлопротеины, цитохромы, супрол, старение.

### **Введение**

Старение, это постепенный, непрерывный процесс естественного изменения организма, который начинается в раннем взрослом возрасте. В раннем среднем возрасте многие функции организма начинают постепенно снижаться. Согласно свободнорадикальной теории старения, имеет место усиление оксидантного повреждения биосистем активными формами кислорода с соответственным усилением процесса липидной пероксидации мембран клеток или экстра/интрацеллюлярных систем. [1,2]. С возрастом (до 65 лет) липидная пероксидация в сыворотке крови усиливается, активность антиоксидантных систем (супероксид дисмутаза, (СОД) глутатионпероксидаза) понижается, уровень церулоплазмينا (ЦП) несколько повышается, активность каталазы сыворотки остается неизменной. А супероксидпродуцирующая активность нейтрофилов выше у молодых людей [4]. С возрастом понижается СОД-активность в эритроцитах и увеличивается перекисное окисление липидов (ПОЛ) в сыворотке крови [6].

Целью поставленной задачи являлась анализ сдвигов уровней металлопротеинов анти- и прооксидантного действия в крови крыс разного возраста.

### **Материал и методы**

Опыты были проведены на беспородных белых крысах, подразделенных на следующие возрастные группы: 2 мес (16), 7 мес (8) и 14 мес (8). Животных декапитировали под легким эфирным наркозом, забирали кровь в отдельные пробирки с натрий-оксалатным буфером.

